ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

9(47·925)„1941-1945" 5756.
Ի-75 Իսահակյան, Գ. Մ.
Վայգ լեռնաշխարհ Սերգեյ
Բուռնազյան. Յռ.

9(47.925) 27
Ի - 75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՄԱՑՈՐ Գ. Դ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ա 69274

ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ ՍԵՐԳԵՅ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1945

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատ. խմբագիր Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Академия Наук Арм. ССР

Институт Истории

Майор Г. Д. Исаакян
Старший лейтенант Сергей Бурнавян
(На армянском языке)

ՎՖ. 00837 Պատվեր 345. Հրատ. 241. Տիրաժ 4000

ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի տպ., Երևան, Աբովյան 104

Գերմանական զավթիչների դեմ մղվող կռվի ճակատում Հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1944 թ. օգոստոսի 2-ի Հրամանագրով մահից հետո Սովետական Միության Հերոսի կոչում է շնորհված հայ ժողովրդի քաջարի զավակ՝ կործանիչ օդաչու, էսկադրիլիայի հրամանատար ավագ լեյտենանտ Սերգեյ Ավդեևիչ Բուռնազյանին։

Սերգեյ Բուռնազյանի պարգևատրման մասին լուրը մեծ գոհունակությամբ ընդունեցին Ստալինյան խիզախ բազեի մարտական բոլոր ընկերները։ Դա ամբողջ հայ ժողովրդի սրտերում օրինական հպարտության զգացում առաջ բերեց։ Մարտադաշտում ի փառս մեր Հայրենիքի կատարած իր սխրագործություններով Բուռնազյանը փառավոր

էջ է գրել Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ։

Սովետական երիտասարդ օդաչու Սերգեյ Բուռնազյանն իր կյանքի մեծ մասը նվիրել է ստալինյան ավիացիային, նրա հզորության աճմանը։ Շնորհիվ իր անսպառ եռանդի, որոնող մտքի ու տաղանդի նա պատվավոր տեղ գրավեց սովետական կործանիչ ավիացիայի նավատորների շարքում։

Օդաչու Սերգեյ Բուռնազյանը ծնվել է 1918 թվականին Ռոստովի մարզի Պրոլետարսկայա ստանիցայում։

1931 թվականին Սերգեյը ծնողների հետ միասին տեղափոխվում է Երևան մշտապես բնակվելու և շարունակում է իր կրթությունը Պուշկինի անվան դպրոցում։

Ապագա հերոսն ընդամենը 13 տարեկան էր, երբ Բուռնազյանների ընտանիքը զբաղվեց իր գլխավորից, և Սերգեյը քրոջ ու կրտսեր եղբոր հետ մնաց մոր խնամքին։

Համառ աշխատանքով ապրուստի միջոցներ ձեռք բերելով՝ Սերգեյի մայրը ամեն ինչ անում էր երեխաների կրթության համար։

Սերգեյ Բուռնազյանը դեռևս մանկությունից աչքի էր ընկնում իր բացառիկ աշխատասիրությամբ, ընդունակություններով և արտասովոր լրջությամբ։ Ուսման, դպրոցական պարապմունքների սերը, ընթերցասիրությունը, դեպի հարազատներն ու ծանոթները ցուցաբերած զգայուն վերաբերմունքը Սերգեյ Բուռնազյանի բնավորության առանձնահատուկ գծերն էին։ Իր այդ հատկություններով նա շատ շուտ աչքի էր ընկնում ամեն մի միջավայրում. դպրոցում համարվում էր գերազանցիկ, իսկ ընկերների սիրելին էր։

Սերգեյ Բուռնազյանի բնավորության այդ աղնիվ գծերը նրա մեջ ամրացել էին առհավետ։ Իր կարճատև կյանքի ընթացքում հերոս օդաչուի մեծ հուշակ ձեռք բերեց նա։

Ավիացիայի սերը Սերգեյ Բուռնազյանի մեջ երևան եկավ մանկուց։ Դեռ 5-րդ դասարանի աշակերտ էր, որ տարվեց ավիամոդելիզմով։ Պարապմունքներից ազատ իր ամբողջ ժամանակը Բուռնազյանը նվիրում

էր այդ գործին։ Ավիամոդելիզմով զբաղվելը դպրոցական պարապմունքների հետ միասին շուտով դառնում է նրա հիմնական զբաղմունքը, ամբողջությամբ կլանում Սերգեյին, և նա դառնում է ավիամոդելիզմի ջերմ սիրահար։ Սավառնել երկնքի կապտագույն տարածություններում, բարձրորակ օդաչու դառնալ, բազմապատկել մեր ավիացիայի փառքը—ահա երիտասարդ Սերգեյի նվիրական երազը. դրան նա ձգտում էր համառորեն, անընկճելի ու քրտնաջան աշխատանքով։ Դեպի այդ էր ղիմում իր բոլոր ուժերով ու ընդունակություններով, և ի պատիվ իրեն, հասավ այն նպատակին, որին հետամուտ էր։

Նա շարունակ հայտարարում էր, թե ավիացիան իր կյանքն է, թե առանց ավիացիայի ինքը չի կարող ապրել, և զուտ ճշմարտություն էր այդ։

Մայրական հուզիչ ու քնքուշ սիրով էր սիրում մայրը Սերգեյին, իր անդրանիկ որդուն։ Բայց ամենևին չէր ցանկանում հաշտվել այն բանի հետ, որ որդին ավիա-

ցիայով, ավիամոդելիզմով էր տարված։ Նա երազում էր իր Սերգեյին ինժեներ կամ բժիշկ տեսնել։

Սերգեյի աշխատասեր մայրը ծերության տարիներին հանգիստ ապրել էր երազում, ու նրա բոլոր հույսերը Սերգեյի հետ էին կապված։ Իսկ որդին, ավիացիայով տարվելով, անհանգստացնում էր մայրական սիրտը։

Սերգեյը քնքուշ և զգայուն վերաբերմունք ուներ դեպի մայրը։ Գիտեր նրա ապրումները և ամեն կերպ աշխատում էր վարձահատույց լինել նրան։ Նա մորը երկար պատմում էր ավիացիայի ու նրա ապագայի մասին, սովետական օդաչուի փառքի մասին, հպարտության զգացում ներշնչելով նրան որդու համար, որն իրեն ավիացիային նվիրելով՝ ականավոր օդաչու կդառնա։ Նա այդ պատմություններն անելով աշխատում էր մոր համաձայնությունն ստանալ։

Սերգեյի՝ ավիացիայով տարվելը ընտանիքում հաճախ վեճեր և նույնիսկ ընտանեկան թյուրիմացություններ էր առաջաց-

նում։ Մի անգամ Բուռնազյանը իր փոքր եղբորը նստեցրեց կարի մեքենայի վրա և սկսեց մեքենայի անիվը պտտեցնել, երևակայելով, թե ինքը օդաչու է, ինքնաթիռի շտուրվալի կողքին։ Անիվը նա այնքան պտտեցրեց, մինչև որ կոտրեց և դրա համար բավական անախորժություններ կրեց։

Բուռնազյանի կյանքի ուղին վերջնականապես որոշող մոմենտ հանդիսացավ ավիամոդելիստների Անդրկովկասյան մրցությունը, որ կայացավ 1935 թվականին Թբիլիսիում։

Լինելով 7-րդ դասարանի 16-ամյա մի աշակերտ, Սերգեյ Բուռնազյանը ավիամոդելիստների մրցության մեջ գրավեց երկրորդ տեղը։ Այս հանդամանքը հսկայական նշանակություն ունեցավ Սերգեյի համար։ Նախ, նրա մայրը, համարելով, որ որդուն հմտացնելը անհույս բան է, ինչպես և ուրախանալով նրա հաջողություններով, տվեց իր համաձայնությունը, և Բուռնազյանը հնարավորություն ստացավ անարգել զբաղվելու

իր սիրած գործով։ Մյուս կողմից, մրցությանը մեջ իր ունեցած հաջողությունով ոգեշնչված Սերգեյն սկսեց ավելի մեծ եռանդով զբաղվել ավիամոդելիզմով։

Դպրոցում նա դասերի հետ միաժամանակ սկսեց ձեռք բերել առաջին գիտելիքները ավիացիայի մասին։ Անասելի արագությամբ կարդում ու կլանում էր այն ամենը, ինչ ձեռքն էր ընկնում, ավիացիայի մասին՝ բրոշյուրներ, գրքեր, հոդվածներ և այլն։

Ավիացիան դառնում է Սերգեյ Բուռնազյանի իսկական տարերքը։

Ավարտելով իննամյակը, Բուռնազյանը առաջուց գիտեր, թե ուր պետք է ուղղի իր քայլերը։ Նա 1937 թվականին այդ քայլերն ուղղում է դեպի Երևանի այերոակումբը։ Դա մի մեծ իրադարձություն էր Սերգեյի կյանքում։ Այստեղ, Երևանի այերոակումբում, նա առաջին անգամ հնարավորություն ունեցավ տեխնիկապես շոշափելու ինքնաթիռը, որ մինչ այդ միայն նրա երազներում ու երևակայության մեջ գոյություն

ուներ։ Եվ միանգամայն հասկանալի է, որ նա մեծագույն թափով սկսեց ինքնաթիռի նյութական մասի ուսումնասիրման և օդաչուական տեխնիկային տիրելու պրակտիկ ու թեորիական պարապմունքները։

Դեպի ավիացիան Բուռնազյանի տածածները, նրա բացառիկ ընդունակությունները շատ շուտ նրա վրա դարձրին պետերի ուշադրությունը։ Երևանի այերոակումբում յուրացնելով սավառնորդության համեստ դասընթացը, Բուռնազյանը հենց այն ժամանակ ինքնաթիռի գերազանց ղեկավար էր։ Այերոակումբի հրամանատարությունը երիտասարդ սավառնորդ Բուռնազյանին նշանակեց հրահանգիչ օդաչու։

Որքան շատ էր նա խորանում սավառնորդության տեխնիկայի մեջ, այնքան ավելի լայնանում էին նրա գիտելիքները, այնքան ավելի էր բորբոքվում նրա սերը դեպի ավիացիան։ Իսկ Երևանի այերոակումբի համեստ հնարավորությունները չէին կարող հագեցնել Բուռնազյանի աճող ծարավը։

Սերգեյի կյանքում բացառիկ իրադարձություն եղավ այն օրը, երբ նա, ուղեգիր ստանալով, մեկնեց Խերսոնի ավիադպրոցում ուսումը շարունակելու։

Խերսոնի ավիադպրոցը, որ Սովետական Միության մեջ կործանիչ օդաչուներ պատրաստող լավագույն դպրոցներից մեկն է, Բուռնազյանին բոլոր հնարավորությունները տվեց իր սիրած մասնագիտությանը տիրապետելու ծարավը հագեցնելու։

Նյութական հարուստ բազան, որակավոր ուսուցիչներն ու հրահանգիչները, զուգորդված Բուռնազյանի անխոնջ եռանդի և ընդունակությունների հետ, նրան դարձրին հիանալի կործանիչ օդաչու։

Բավական է նշել, որ մինչդեռ բացառիկորեն բարձր էին ներկայացվող պահանջները, Սերգեյ Բուռնազյանը ոչ միայն միշտ էլ ուսման գերազանց ցուցանիշներ ուներ, այլև ավիադպրոցն ավարտելուց հետո նրան այնտեղ պահեցին որպես հրահանգիչ օդաչու։ Այն ժամանակ Սերգեյը ընդամենը 22 տարեկան էր։

Բուռնազյանը իրեն հատուկ եռանդով սկսեց սովորեցնել երիտասարդ կուրսանտներին։ Զուգընթացաբար նա շարունակում էր կատարելագործել իր վարպետությունը։ Սկսեց թափով յուրացնել բարձրագույն սավառնորդության տեխնիկան, որ այնքան անհրաժեշտ է կործանիչ օդաչուի համար, ուսումնասիրում էր սովետական կործանիչ ավիացիայի նոր մարկները, որ այդ ժամանակները բուռն թափով զարգանում էր։

Սերգեյ Բուռնազյանը իրեն երջանիկ էր զգում, ինչպես և սովետական ամբողջ երիտասարդությունը, որ ամբապես կանգնած է իր կյանքի լուսավոր ուղում։

Նա գիտեր, որ այսուհետև ոչ միայն ինքն է ընտրել իր ուղին դեպի ավիացիա, այլև ավիացիան է նրան առաջնորդ ընդունել իր գիրկը։

Խերսոնում Սերգեյ Բուռնազյանը ծանոթացավ համեստ, հանգիստ ու աշխատասեր մի աղջկա՝ Կատյուշայի հետ։ Հենց այսպես է բնորոշում նրան Սերգեյը մորը գրած նամակում։ Որոշ ժամանակ անց Սեր-

գեյը ամուսնացավ իր սիրած աղջկա հետ։

Ավիացիան և սիրելի Կատյուշան զարդարում էին սովետական երիտասարդ կործանիչ օդաչուի կյանքը, և Սերգեյը իրեն անչափ երջանիկ էր համարում։ Նա էլ ավելի ուրախացավ, երբ 1941 թ. մայիսի 22-ին սիրելի Կատյուշան նրան պարգևեց մեկ տղա։

Բայց Սերգեյին վիճակված չէր երկար ճաշակել ընտանեկան կյանքի երջանկությունը։

Ավդեյ Սերգեևիչը (իր որդուն այդ անունն էր տվել Սերգեյ Ավդեևիչը, գտնելով, որ նա շատ նման է իր պապ Ավդեյին) դարձել էր ուղիղ մեկ ամսական, երբ հիտլերյան ավազակները խուժեցին մեր խաղաղ քաղաքներն ու գյուղերը, երբ հիտլերյան օդային հելուզակները որսի ելան տարադիրների վրա՝ ճանապարհներին, իսկ զերմանական ավազակախմբի մյուս մասը հաղարավոր տանկերի և ավտոմեքենաների վրա նետվում էր դեպի Արևելք, ոչնչացնելով ճանապարհին պատահած ամեն ինչ։

Խերսոնի ավիադպրոցի հազարավոր սաները նստեցին ինքնաթիռների շտուրվալների մոտ և դաժան թշնամու ուխտադրուժ հարձակման հենց առաջին օրերից մահու ու կենաց մարտի բռնվեցին նրա հետ։

Անհավասար մարտերում մեր հերոսական կարմիր բանակը և ռազմա-օդային ուժերը համառ դիմադրություն էին ցույց տալիս թշնամուն, փշրելով հակառակորդի կենդանի ուժն ու տեխնիկան։ Բայց թշնամին ուժեղ էր, այն ժամանակ նա տանկերի և ավիացիայի գերակշռություն ուներ, և ռազմաճակատի գիծը դեպի Արևելք էր շարժվում։ Խերսոնի ավիադպրոցը փոխադրվեց Բորիսոգլեբսկ։

Սերգեյ Բուռնազյանը, որպես իր սիրելի հայրենիքը ջերմորեն սիրող քաղաքացի, անզուսպ ձգտում էր դեպի ռազմաճակատ։ Նա խնդրում ու աղաչում էր հրամանատարությանը այդ մասին, բայց խիստ հրաման ստացավ շարունակել իր աշխատանքը և արագացնել ռազմա-օդային ուժերի համար օդաչուների կադրերի պատրաստումը։

Սերգեյ Բուռնազյանը փաստորեն կռվում էր ռազմաճակատում Հայրենական պատերազմի առաջին օրից, մարտերին մասնակցում էր նրանով, որ օդաչուներ էր պատրաստում, բայց այդ չէր բավարարում նրան։ Սերգեյի միակ երազն էր՝ որքան կարելի է շուտ երես-երեսի հանդիպել ոխերիմ թշնամուն և նրա դեմ մղվող մարտերում ցույց տալ կործանիչ օդաչուի իր ձեռք բերած վարպետությունը։

1941 թվականի վերջին կատարվեց օդաչու Բուռնազյանի այդ երազը։ Եվ կործանիչների էսկադրիլիայի կազմում նա մեծ ուրախությամբ կատարում է իր մարտական առաջին թռիչքը։ Մասնակցելով խմբական մարտին, Սերգեյ Բուռնազյանը իր մարտական հենց առաջին թռիչքի ժամանակ ցած գցեց գերմանական մեկ ինքնաթիռ, գնդակոծեց հակառակորդի զորությունները։ Սերգեյը երբեք այնպիսի ուրախություն չէր զգում, ինչպես այդ օրը։ Դրանով է սկսվում ապագա հերոսի, խիզախ կործանիչ օդաչու Սերգեյ Բուռնազյանի

Գիտական գրադարան

մարտական երևելի կենսագրության փառավոր էջը։

Մեր հայրենիքին սպառնացող մահացու վտանգի օրերին, երբ թշնամին կատաղորեն դեպի Կովկաս էր նետվում և սև ամպի նման կախվել էր Ստալինգրադի վրա, Սերգեյ Բուդոնազյանը մտնում է լեգենդար քաղաքի հերոս պաշտպանների շարքերը և մինչև հակառակորդի ստալինգրադյան խմբավորման վերջնական ջախջախումը մասնակցում է Վոլգայի վրայի այդ ամրոցի պաշտպանությանը։

Մեր ամբողջ երկրի, ամբողջ առաջադեմ մարդկության հայացքներն այդ օրերին ուղղված էին Ստալինգրադի վրա։ Այստեղ էր որոշվում մեր հայրենիքի բախտը, սերունդների բախտը, ամբողջ առաջավոր մարդկության բախտը։ Սովետական յուրաքանչյուր հայրենասեր Ստալինգրադում այդ օրերին ծավալված կատաղի գոտեմարտում զգում էր հայրենիքի հնքը որպես իր սրտի բաբախում։

Օդաչու Բուռնազյանը ստալինյան հարյուրավոր ու հազարավոր բազեների թվում՝ Ստալինդրադի համար մղված այդ վճռական մարտերում պատվով կատարեց սիրելի հայրենիքի հանդեպ իր պարտքը։ Նա թշնամուն ոչ միայն ջախջախում էր օդում և ցամաքի վրա, այլև դրա հետ մեկտեղ մարտական փորձ էր կուտակում, աճում ու առնանում էր մեր ամբողջ փառապանծ Կարմիր Բանակի հետ միասին և շուտով դարձավ փորձառու, մարտերում կոփված կործանիչ օդաչուներից մեկը։

Սերգեյի հետ միասին Ստալինգրադ է փոխադրվում նրա անբաժանելի ու սիրելի ընկերուհի Կատյուշան Ավդեյ որդու հետ։

1942 թ. օգոստոսի 9-ին, Ստալինգրադում մղված ամենակատաղի մարտերի օրերից մեկում, թշնամու ռումբի բեկորով սպանվում է օդաչուի կինը, նրա սիրելի ընկերուհի Կատյուշան։

Թշնամու ռումբից սիրելի կնոջ կորուստը ցնցող ազդեցություն ունեցավ օդաչու Սերգեյ Բուռնազյանի վրա։ Նուաց արյունը նրա

երակներում, նրա սրտում է՝ լավելի բորբոքվեց ատելությունը դեպի թշնամին, նա երդվեց թշնամիներից անողոք վրեժ լուծել սիրելի կնոջ արյան համար, սովետական հազարավոր մարդկանց արյան ու արցունքների համար, Ստալինգրադի ավերակների համար։

«Խեղճ Կատյուշա,—գրում էր Սերգեյը մորն ուղարկած նամակում, հաղորդելով իր կրած վիշտը,—առաջ ես նրա հետ էի բաժանում թե վիշտս, թե ուրախությունս, միայն նա էր կարողանում ինձ մխիթարել, իսկ այժմ մեկ բան գիտեմ՝ բռնել ու սպանել ավելի շատ գերմանացիներ»։

Եվ ամեն անգամ, երբ Սերգեյը օդ էր բարձրանում ու թշնամուն հանդիպում, նրան թվում էր, թե իր սիրելի Կատյուշան սպանվել է ահա հենց այդ օդային ավազակի ռումբով, և թշնամուն հազվադեպ էր հաջողվում անպատիժ ազատվել Բուռնազյանի հմտարձակ գրոհից և կորստաբեր կրակից։

«Ես միայնմեկ բավականություն ունեմ,—գրում էր Բուռնազյանը հարազատներին,—

մարտական առաջադրանք կատարելու թռչել և սպանել մեկ, մյուս գերմանացուն»։

Մարտական եռուն գործերը Սերգեյին թույլ չէին տալիս հաճախ թղթակցել հարազատների հետ, բայց այն սակավաթիվ նամակները, որ նա գրում էր ռազմաճակատից, միանգամայն բավական են նրան որպես երևելի մարդու, իսկական հայրենասերի, մարտական օդաչուի, թշնամուն հոգու ամբողջ ուժով ատողի բնորոշելու համար։

«Ես առայժմ ողջ-առողջ եմ։ Խփում ենք գերմանացիների գլխին ու վզակոթին», գրում էր Բուռնազյանը Ստալինգրադի մոտ գեղգմարշալ ֆոն-Պաուլիուսի ընտիր բանակը ջախջախելու օրերին։ Հենց նույն նամակում նա հարազատներին հաղորդում է, որ իրեն պարգևատրել են Կարմիր Դրոշի շքանշանով։

Մարտական այդ առաջին շքանշանով, որով պարգևատրվեց Բուռնազյանը, հրամանատարությունը արժանավորապես գնահատեց քաջարի օդաչուի մարտական սխրա-

գործությունները, որ Ստալինգրադի համար մղված մարտերում ցած էր գցել գերմանական 10 ինքնաթիռ։

Արդեն այն ժամանակ օդաչու Սերգեյ Բուռնազյանը իր ստորաբաժանման ամբողջ անձնակազմի մեջ մեծ հռչակ էր վայելում։

Ստալինգրադի համար մղված մարտերն ավարտվելուց հետո հրամանատարությունը, բարձր գնահատելով Բուռնազյանի մարտական վարպետությունը, շնորհում է նրան ավագ լեյտենանտի կոչում և նշանակում կործանիչ ավիացիայի էսկադրիլիայի հրամանատար։

Բուռնազյանը բացառիկ պատասխանատվության զգացումով էր վերաբերվում իր հրամանատարական աշխատանքին, ամենուրեք և միշտ բարձր էր պահում սովետական սպայի պատիվն ու արժանապատվությունը։ Նա իր ստորադրյալների համար ամեն բանով օրինակելի էր։ Նրանք աշխատում էին ամեն ինչով նմանվել իրենց սիրելի հրամանատարին, նա իր էսկադրիլիայի հայրն ու հոգին էր։ Իր ստորա-

զրյալներին սովորեցնում էր. «Մարտում հետևեցեք ինձ և գործեք այնպես, ինչպես ես եմ գործում»։

Իր կնոջ սպանվելուց հետո մորն ուղարկած նամակում Բուռնազյանը գրում էր. «Իմ էսկադրիլիայի տղաները մարտում ինձ չեն ճանաչում. ես դարձել եմ առյուծ»։ Նա սկսեց գերմանացիներին խփել ավելի ուժեղ, կրկնապատկված ու եռապատկված եռանդով, սկսեց ավելի ատել թշնամուն, և այդ նրա մեջ նոր ուժ էր լցնում, նրա հարվածները դառնում էին հզոր ու անվրեպ։ Գերմանական ավելի քան տաս ինքնաթիռ, հակառակորդի բազմաթիվ զորասյուներ կործանվեցին Սերգեյ Բուռնազյանի դյուցազնական հարվածներից։ Բայց այդ՝ հերոս օդաչուի մարտական վեհ էպոպեայի սկիզբն էր միայն։

Ստալինգրադի համար մղված մարտերի ժամանակաշրջանում Բուռնազյանը մտավ բոլշևիկյան պարտիայի շարքերը։ Ինչպես Ստալինգրադում, այնպես էլ Հայրենական պատերազմի այլ ճակատներում Բուռնա-

գյանը բարձր է պահել Լենինի—Ստալինի պարտիայի փառապանծ ու հաղթական դրոշը, նրա շուրջն է համախմբել իր ստորադրյալներին և նրանց անդուլ դաստիարակել մեր հայրենիքին անհունորեն նվիրված լինելու ոգով։

1943 թվականի փետրվարի 2-ին Ստալինգրադի շրջանում վերջնականապես ջախջախվեցին գերմանական երկու ընտիր բանակները։ Թշնամին սպանված ու գերի կորցրեց ավելի քան 330 հազար զինվոր ու սպա, այդ հաղթանակի մեջ հայ ժողովրդի փառապանծ զավակ Սերգեյ Բուռնազյանը ևս իր լուման դրեց։

Վոլգայի ու Դոնի միջև ամբողջ տերիտորիան այդ ժամանակաշրջանում մաքրվեց գերմանական զավթիչներից։ Կարմիր Բանակի հարվածների տակ թշնամին միաժամանակ սկսեց նահանջել նաև Հյուսիսային Կովկասում, ռազմաճակատը փոխադրվեց Դոնի Ռոստովից արևմուտք։ Սկսվեց բազմաչարչար ուկրաինական հողի ազատագրումը։

Ստալինգրադի համար մղված մարտերում կռվված բանակի հետ միասին, կրնկակոխ հետապնդելով թշնամուն, հարազատ Ուկրաինայի համար մարտի է բռնվում նաև այն ավիագորամասը, որտեղ ծառայում էր Սերգեյ Բուռնազյանը։

Մինչ Ուկրաինայի համար կատարած իր մարտական գործողությունների սկիզբը Սերգեյ Բուռնազյանը հանրագումարի բերեց Ստալինգրադում կուտակած իր մարտական փորձը։ Բանակային „Защитник отечества" թերթի 1943 թ. հունվարի 1-ի համարում տպված է օդաչու Բուռնազյանի միակ հոդվածը։ «Օդային մարտ» վերնագիրը կրող այդ փոքրիկ հոդվածը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում։ Նրանում Բուռնազյանը ոչ միայն տալիս է 1942 թվի իր մարտական գործունեության հանրագումարը, այլև այնտեղ բացահայտվում է հայրենասիրի, հիանալի մարդու, քաջարի մարտիկի և տաղանդավոր կազմակերպիչ հրամանատարի երևելի կերպարը։ Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում անփո-

փոխ բերել Բուռնազյանի հիշված հոդվածը։

«Իմ մարտական աշխատանքը—դրում է Բուռնազյանը—սկսվեց 1942 թ. ամառը։

Կատարում էի զանազան առաջադրանքներ։ Հետախուզության, գրոհի, ռազմական կարևոր օբյեկտների պաշտպանման։ Կատարել եմ ընդամենը 198 մարտական թռիչք, ցած եմ գցել թշնամու 10 ինքնաթիռ և 4-ն էլ խմբական մարտում։

Ես ամենից ավելի սիրում եմ թռչել մեր ցամաքային զորքերը պաշտպանելու համար։ Այդ դեպքում հաճախ են լինում հանդիպումներ հակառակորդի հետ։

Հիշողությանս մեջ առանձնապես մնացել է Ս. քաղաքի մոտ տեղի ունեցած օդային մարտը։ Բայառիկորեն լավ եղանակ էր։ Վաղ առավոտյան մենք թռանք պաշտպանելու ռազմական կարևոր օբյեկտներ։ Արևը դեռ չէր ծագել։ Քաղաքը վառվում էր, և թանձր ծխի ամպեր էին բարձրանում նրա վրա։ Մենք երեք հոգի էինք։ Քաղաքի վերևը դեռ ոչ մի ինքնաթիռ չկար։ Մենք առաջինն էինք։ Բայց գերմանացիները

չատիպեցին, որ իրենց երկաթ սպասենք։ Արևմուտքից թռչում էր ֆաշիստական ռմբակոծիչների մի բազմություն. դրանց թիվը մոտ 50 էր. և նրանց ուղեկցում էին „ME-109“ տիպի 15—20 կործանիչներ։

Նկատելով թշնամուն, ես ընկերներիս հավաքեցի և զնացի արևի կողմը, որպեսզի «դային ավազակներին գրոհում հանկարծակի։

Երբ «Յունկերսները» վերադասավորվեցին ռումբեր նետելու համար, ես գրոհեցի առաջատարի վրա և արկով հրկիզեցի նրան։ Ինձ հետևող ավագ Եվսեևը հենց առաջին գրոհով հրկիզեց երկրորդին։ Մեր երրորդ ընկեր ավագ Սմիրնովը պաշտպանում էր մեզ։ Հերթով գրոհելով, մենք ֆաշիստներին ստիպեցինք ռումբերը ցած գցել որտեղ պատահի։ Հետո մեզ նկատեցին «Մեսերշմիտները», բայց արդեն ուշ էր։ Մենք մեր հիմնական խնդիրը կատարեցինք։ Ավագ Եվսեևը ցած գցեց դարձյալ մեկ «Յունկերս»։

Երբ ռազմամթերքը սպառվեց և բենզինը հատնելու վրա էր, մենք կործանիչ-

ներից պաշտպանվելով սկսեցինք հեռանալ գետի մյուս կողմը։ Այդ ժամանակ հինգ «Մեսսերշմիտտ» ինձ սեղմեցին, շրջան կազմեցին և հեռանալու հնարավորություն չէին տալիս։

Բենզին քիչ էր մնացել։ Բայց այդ ժամանակ ավագ Սմիրնովը հաջող գրոհով ցած գցեց ֆաշիստական մեկ գիշատիչ։ Օդակը ետ բացվեց, և մնացած «Մեսսերշմիտտները» փախան։

Այդ մարտում մենք ցած գցեցինք 4 ինքնաթիռ, առանց ինքներս կորուստ ունենալու։

Ես սիրում եմ իմ Հայրենիքը և ամբողջ հոգով ատում եմ գերմանացիներին, ուստի և անխնա ոչնչացնում եմ նրանց։ 1943 թվականին էլ ավելի լավ կկռվեմ, և ցած գցած ինքնաթիռների հաշիվը կմեծանա։ Ֆաշիստներին խփելը ինձ համար ամենամեծ երջանկությունն է»։

Թեպետ Սերգեյ Բուռնազյանը, իր սովորական համեստությամբ, այդ հոդվածում պատմում է ավելի իր մարտական ընկեր-

ների, քան իր գործերի մասին, այնուամենայնիվ այդ հոդվածը բաց է անում նրա երևելի և գունեղ կերպարի ամբողջ խորությունը։ Մասնակցելով Ուկրաինայի ազատագրության համար մղված մարտերին, որպես կուփված ու փորձառու կործանիչ օդաչու, Սերգեյ Բուռնազյանը պատվով կատարեց նոր տարուն տված իր խոստումը և ատելի գերմանացիներին ջախջախում էր կրկնապատկած ու եռապատկած եռանդով։

1943 թվականի սկզբից մինչև նույն տարվա գարունը Հյուսիսային Դոնեցի մոտ ու Դոնբասում կատաղի ընդհարումներ տեղի ունեցան գերմանացիների հետ։ Հակառակորդը խիստ ամրացրել էր ջրային նպաստավոր բնագիծը և հաճախակի հակագրոհներով աշխատում էր կասեցնել մեր հարձակումը Իզյումի և Բարվենկովոյի շրջանում։ Երկիրը, սովետական ամբողջ ժողովուրդը Սովետական ինֆորմբյուրոյի այն օրերի հաղորդագրություններից հիշում է Իզյում—Բարվենկովո ուղղության երկարատև ու կատաղի մարտերը։

Հարավային ռազմաճակատի հենց այդ վճռական ընդհարումներին մասնակցեց Սերգեյ Բուռնազյանի ավիաջոկատը, հետն էլ մեր հերոս օդաչուն։ Այդ մարտերում նա իր անմահ սխրագործություններով հռչակվեց ամբողջ ռազմաճակատում, գրավեց օդաչուների, հետևակայինների, տանկիստների ու հեծելազորայինների սերն ու հարգանքը։

Կատարելով հրամանատարության առաջադրանքը, Սերգեյ Բուռնազյանը երեք ու կես ամսվա մարտերի ընթացքում ամեն օր մասնակցում էր հակառակորդի հետ օդային ընդհարումներին։ Նա թռչում էր պաշտպանելու ցամաքային զորքերը, ուղեկցում էր մեր ռմբակոծիչ ավիացիային, գրոհում հակառակորդի ցամաքային ուժերի վրա։ Եվ Բուռնազյանի էսկադրիլիայի մարտական կյանքի յուրաքանչյուր օրը ավելի ու ավելի խորը դրսևորում էր այն անքակտելի կապերը, որոնցով զոդված էր քաջերի այդ խիզախ կոլեկտիվը օդաչու Բուռնազյանի գլխավորությամբ։

Բուռնազյանի էսկադրիլիայում էին նրա աշակերտներ ու մարտական ընկերներ կըրտսեր լեյտենանտներ Կոնդրատենկոն, Դենիսենկոն, Սերեդինը, ավագ Տավրուևը, սերժանտներ Գոյը, Լադիգինը և ուրիշները։

Նրանք բոլորը մարտական ամուր բարեկամությամբ էին կապված իրար և իրենց սիրելի հրամանատարի հետ։ Նրանցից յուրաքանչյուրը իր համար մեծ պատիվ էր համարում Բուռնազյանի էսկադրիլիայում ծառայելը, նրանցից յուրաքանչյուրը պատրաստ էր ամեն րոպե մահացու վտանգի ենթարկելու իր կյանքը, որպեսզի մարտի մեջ օգնի ընկերոջը, նրանցից յուրաքանչյուրը պարծանք էր համարում Բուռնազյանի հետ թռչելը և իր հրամանատարին պաշտպանելը։

Էսկադրիլիայի ամբողջ անձնակազմը ամեն բանում օրինակ էր վերցնում իր հրամանատարից։ Իսկ Բուռնազյանը տալիս էր միայն աներկյուղության, վարպետության, խիզախության ու հերոսության օրինակ։ Հրամանատար Բուռնազյանի հենց այդ հատ-

կությունները դարձան նրա աշակերտների, էսկադրիլիայի բոլոր օդաչուների սեփականություն։ Մենք քիչ դեպքեր չգիտենք, որոնք ցույց են տալիս Բուռնազյանի հոչակավոր էսկադրիլիայի մարտական կուռ բարեկամությունը։

Էսկադրիլիայի հրամանատարի հետ զույգ կազմած հաճախ թռչում էր սերժանտ Անատոլի Լադիգինը։ Նա ամենից ավելի լավ գիտեր մարտի մեջ իր հրամանատարի գործադրած ձևերն ու միջոցները։ Լադիգինը իր հրամանատարի կյանքն ավելի թանգ էր գնահատում, քան իրենը։—Ինքս կկորչեմ, բայց հրամանատարս այդ դիշատիչների ձեռը չի դառնա,—ասում էր նա։ Դա մարտերում ընկած-ելած զինվորի, Բուռնազյանի անձնվեր բարեկամի և ընդունակ աշակերտի անկեղծ խոսքերն էին։ Շատ անգամ է տաք կռիվներում Լադիգինը փրկել Բուռնազյանին և շատ անգամ է հրամանատարը փրկել Լադիգինին։

Մի անգամ սովետական չորս կործանիչ Բուռնազյանի առաջնորդությամբ հանդի-

պեցին թշնամու 30 ինքնաթիռի։ Անհավասար մարտ սկսվեց։ Բուռնազյանին ուղեկցում էր Լադիգինը, մինչդեռ նրանք կռվի բռնվեցին «Մեսսերների» հետ, մյուս զույգը գրոհեց ռմբակոծիչների վրա։ Ճակատից կատարած գրոհում Բուռնազյանը ցած գցեց մեկ „ME—109“ և ինքն ընկավ սպառնալի դրության մեջ։ Թշնամու մյուս կործանիչը անցավ նրա ինքնաթիռի պոչի ետևը։ Այն մոմենտին, երբ գիշատիչը, հենց այն է, պետք է կրակեր, սերժանտ Լադիգինը այնքան մոտեցավ գերմանական մեքենային, որ տեսավ թշնամու դեմքը, և ետ մղեց գերմանացու գրոհը։ Դրանից անմիջապես հետո վտանգը Լադիգինին էր սպառնում. երկու „ME—109“ աքցանի մեջ առան նրա ինքնաթիռը։ Բուռնազյանը ժամանակին օգնության հասավ, քշեց ֆաշիստական անգղներին, ետ մղեց բոլոր գրոհները և փրկեց ընկերոջը։ Գետնատնակը գալով՝ Լադիգինը հիացմունքով պատմում էր, թե ինչպես այդ մարտում հրամանատարը շեշտակի

խոցեց ֆաշիստական մեկ օդային ավա-
զակի ևս։

Բուռնազյանը բարձր էր գնահատում իր
սան Լադիգինի մարտական հատկություն-
ները։ Երբ ինքը թշնամու մեքենա էր ցած
գցում, այդ բանը վերագրում էր նաև Անա-
տոլի Լադիգինին, որն արթուն կերպով
պաշտպանում էր հրամանատարի ինքնա-
թիռը։

Բուռնազյանի էսկադրիլիայի օդաչու-
նների փոխադարձ ջերմ սիրո մասին ամբողջ
բանակը գիտեր։ Նրանց մասին հաճախ գրում
էին կարմիրբանակային „Защитник оте-
чества", „Советский воин" թերթերը,
նրանցով սքանչանում և նրանցից օրինակ
էին վերցնում ուրիշ ստորաբաժանումների
օդաչուներն ու մարտիկները։ Եվ երբ այդ
համերաշխ ընտանիքից որևէ մեկը վիրա-
վորվում և հոսպիտալ էր գնում բուժվելու,
նրա միակ ցանկությունը լինում էր որքան
կարելի է շուտ շարք վերադառնալ՝ իր բա-
րեկամների մոտ։ Իսկ շարքում մնացած
ընկերները աղատ րոպեներին հաճախ մտա-

բերում էին բացակայող ընկերոջը և պատմում նրա մասին։

Այդպես պատահեց նաև կրտսեր լեյտենանտ Սերեդինի հետ։ Այդ քաջարի օդաչուն առանձին սեր էր վայելում ամբողջ զորամասում։

Մի անգամ, մարտական առաջադրանք ստանալով, Բուռնազյանն իր վեցյակի հետ թռավ օդանավակայանից։ Հենց կտրեցին նրանք ռազմաճակատի գիծը, նկատեցին իրենց դեմ թռչող ավելի քան երեք տասնյակ «Մեսսերներ»։

Բուռնազյանը արագորեն որոշում է գրոհել հակառակորդի վրա։ Նրա էսկադրիլիան իր մարտական տրադիցիաներն ուներ։ Երբեք չխուսափել մարտից, չնայած հակառակորդի թվական գերակշռությանը, առաջինը ինքը գրոհել և նախաձեռնությունը ձեռքից չտալ։ Այդ տրադիցիային խստիվ հետևում էին էսկադրիլիայի բոլոր օդաչուները, և դա նրանց միշտ էլ հաղթություն էր բերում։ Այս անգամ ևս այդպես պատահեց։ «Մեսսերների» հետ մարտը տևեց ընդա-

մենը 20 բոպե։ Զնայած գնդակների տարափին, համարձակ նայելով մահվան աչքերին, Բուռնազյանի քաջ սաները հրամանատարի գլխավորությամբ տասնյակ անգամներ գրոհեցին հակառակորդի վրա։ Բուռնազյանի էսկադրիլիան այդ անհավասար մարտում ցած գցեց թշնամու 7 ինքնաթիռ, դրանցից 2-ը ցած գցեց Բուռնազյանը անձամբ։

Այդ մարտում ծանր վերք ստացավ օդաչու Վլադիմիր Սերեգինը։ Նրան հոսպիտալ տարան, և բոլոր ընկերները շատ ծանր էին տանում նրա բացակայությունը։

Միքանի ժամանակ անց Բուռնազյանը մի գրություն ստացավ օդաչու Սերեգինից։ «....64 բեկոր էր, բոլորը հանեցին։ Վերքերը լավանում են։ Կարոտում եմ։ Շուտով կվերադառնամ ձեզ մոտ, թանկագին ընկերներ»։

Այդ նամակը խիստ ուրախացրեց Սերեգինի բոլոր բարեկամներին, իսկ այդ օրն ամենից շատ ուրախ էր ինքը Բուռնազյանը։ Նա անհամբեր սպասում էր իր մարտական

բարեկամ-աշակերտի շուտափույթ վերադարձին։

Բայց մարտերը ոչ մի օր չէին հանդարտում։ Բուռնազյանի էսկադրիլիան ամեն օր մի քանի անգամ թռչում էր մարտական առաջադրանքներ կատարելու և յուրաքանչյուր թռիչքով բազմապատկում ցած գցած ինքնաթիռների իր մարտական հաշիվը, դրա հետ մեկտեղ էլ իր փառքը։

Բուռնազյանի էսկադրիլիան շուտով ավելի ծանր կորուստ կրեց։ Մարտական առաջադրանքի կատարման ժամանակ քաջի մահով ընկավ Բուռնազյանի ղույգ, նրա բարեկամ սերժանտ Անատոլի Լադիգինը։ Էսկադրիլիայի և ավիազորամասի ամբողջ անձնակազմի համար խիստ ծանր էր այդ կորուստը։ Մարտական բարեկամի թաղման ժամանակ գլխաբաց կանգնած էին Լադիգինի մտերիմները։

— Նա պաշտպանեց Հայրենիքի պատիվը, մեր մարտական դրոշի պատիվը։ Մարտում անմերժ էր Անատոլին,—ասում էր Բուռնազյանը։

«Նրա արյունը վրեժի է կոչում,— ասացին օդաչուները,— մենք երդվում ենք թշնամուց վրեժ լուծել քո մահվան համար, թանկագին ընկեր»։

... Հետևյալ օրն առավոտյան հինգ մեքենա սուրացին վեր։ Նրանք սրընթաց անցան ձյունապատ դաշտի վրայով, այն օդանավակայանի մոտ, որտեղ թաղված էր մարտական ընկերոջ մարմինը։ Նրանք, կիզիչ ատելությամբ լցված դեպի թշնամին, սկսեցին էլ ավելի մեծ հերոսությամբ կռվել։ Երեքօրյա մարտերում ստորաբաժանման օդաչուները ցած գցեցին ֆաշիստական 17 ինքնաթիռ։ Դա քաջարի օդաչու, Բուռնազյանի սան և բարեկամ սերժանտ Անատոլի Լյուդիգինի արյան անողոք ու դաժան վրեժի հաշիվն էր։

Բուռնազյանի էսկադրիլիան Ուկրաինայի համար մղած երկամսյա մարտերի ընթացքում ցած գցեց հակառակորդի ավելի քան 50 ինքնաթիռ, և այդ էսկադրիլիայի հուշակը տարածվեց ամբողջ ռազմաճակատում։ Փառապանծ ստորաբաժանման մարտական սխրագործություններն ու հերոսությունը

վերապրվում էին նրա երևելի հրամանատարին, որն իր օդաչուներին անդուլ դաստիարակում էր թշնամուն ատելու, արիության, խիզախության և հմտության ոգով։ Նա նրանց սովորեցնում էր, դաստիարակում և մարտի տանում։

Հենց այստեղ, Ուկրաինայի ազատագրման համար մղած մարտերի ժամանակաշրջանում, 1943 թ. գարնանը, Բուռնազյանը էսկադրիլիայի հրամանատարի պաշտոնում ցույց տվեց ոչ միայն հրամանատարի ընդունակություններ, այլև մարտական իսկական վարպետություն, հայտնի դառնալով որպես կործանիչ ավիացիայի անխոնջ նավատոր։

Բուռնազյանը որպես հրամանատար իր ստորադրյալներին սովորեցնում էր ամեն քայլափոխին, սովորեցնում էր օդանավակայանում, մարտերի ընդմիջումներին, սովորեցնում էր մարտում, իսկ նրա ուսուցման մեջ գլխավորը անձնական օրինակն էր։

Այդ տեսակետից բնորոշ է հետևյալ միջադեպը։

Թռիչքներից ազատ ժամանակ էսկադ-

ռիլիայի օդաչուները ուսուցումով էին զբաղվում։ Պարապմունքի թեման էր՝ «Ինչպես ավելի լավ մոտենալ միայնակ ռմբակոծիչին և խփելը»։

Օդաչուները զանազան վարիանտներ էին առաջարկում և տաք-տաք վիճում։ Ավագ լեյտենանտ Բուռնազյանը այդ մասին իր հատուկ կարծիքն ուներ և մոտենալով օդաչուներին՝ սկսեց պատմել։

— Նպատակահարմար է միայնակ ռմբակոծիչին մոտենալ նրանից 10—15 մետր ցածրից, 15—20 աստիճանով։ 30—50 մետր հեռավորությունից հարկավոր է նշանացուցային կրակ բանալ։ Կարելի է մեկ կրակաերթով խոցել հրաձիգին և ձախ մոտորը միաժամանակ։

Օդաչուները ուշադրությամբ լսում էին իրենց հրամանատարին, աշխատելով բաց չթողնել նրա ասած և ոչ մի բառ։

Բայց Բուռնազյանը չէր ավարտել իր խոսքը, որ օդանակայանում տագնապ հայտարարվեց։

— Օդանավակայանի վերևը գերմանական հետախույզ կա,—հաղորդեց օրա-

պահը։—«Ցու—88» տիպի։ Բարձրությունը՝ 1500։ Կուրսը՝ 45։

Օդաչուները նետվեցին դեպի իրենց մեքենաները։ Թռավ նաև Բուռնազյանը։ Բարձրանալով նա հասավ դիշատչին և կռվի բռնվեց հետը։ Ներքևում կանգնած էին ավիացորամասի օդաչուներն ու տեխնիկները։ Նրանք հուզմունքով դիտում էին օդային մարտի ամբողջ զարգացումը։ Անցավ մի քանի րոպե, «Ցու—88»-ը ծանրորեն շրջվեց թևի վրա և ուղղվեց դեպի գետին, իրենից սև ծխի հետք թողնելով։ Բուռնազյանը այդ մարտում այնպես էր գործում, ինչպես քիչ առաջ պատմում էր իր օդաչուներին։ Երբ վերադարձավ օդանավակայան, մոտ վազեցին օդաչուները և հիանում էին իրենց հրամանատարի արիությամբ ու հմտությամբ։

Ճիշտ եք ասում, ընկեր հրամանատար, այժմ գործնականում համոզվեցինք, թե ինչպես պետք է խփել միայնակ ռմբակոծիչին։

Ցուրաքանչյուր մարտական թռիչքից առաջ Բուռնազյանը ժողովում էր իր օդա-

չուներին, բացում էր քարտեզը և մանրամասնորեն պատմում առաջիկա խնդիրը, հակառակորդի ինքնաթիռների այս կամ այն խմբին հանդիպելիս վարելիք մարտի եղանակները, նրանց հետ ուսումնասիրում առաջիկա գործողությունների մարշրուտն ու շրջանը։ Իսկ հետո քաջալերում և մարտի էր տանում։

Բուռնազյանը մի ուրիշ ոսկե կանոն էլ ուներ։ Յուրաքանչյուր մարտից հետո նա հավաքում էր իր օդաչուներին և մանրամասնորեն քննում կատարած գործողությունը։ Նա մանրամասնորեն վերլուծում էր մարտն ամբողջությամբ, ուսիչ և բացասական մոմենտները, անում էր հետևություններ և տալիս էր ցուցումներ։ Դրա հետ մեկտեղ մանրամասնորեն բնութագրում էր յուրաքանչյուր օդաչուի վարվելակերպը, գովում արիության ու հմտության համար և ցույց տալիս թերությունները։ Մի անգամ հարկ եղավ Տավրուևին խիստ նկատողություն անել, որ նա շարքում ետ էր մնում և մնացել էր պոչում՝ հեռու։

— Տավրուևը ջանում էր արտաքին շրջագծով բացագատվել,— ասում էր Բուռնազյանը,— մինչդեռ պետք է բացագտվեր դեպի ներս, որպեսզի փոքրացներ շառավիղը և հասներ ընկերոջը։ Դրանից կարող էր այն ստացվել, որ եթե վրա հասնեին «Մեսսերները», Տավրուևը չէր կարողանա քողարկել իր զույգի մեքենայի պոչը, իսկ վերջինս էլ իր հերթին չէր կարողանա նրան օգնություն ցույց տալ հարձակման դեպքում։

Այդ նկատողությունները և նրա ուրիշ շատ ցուցումները օրը-օրին օդաչուներին օգնում էին բարձրացնելու իրենց մարտական վարպետությունը։ Այսպես անդուլ կերպով սովորեցնում ու դաստիարակում էր իր ստորադրյալներին, և նրա աշխատանքը մարտական նոր փառք էր բերում։

Ամեն առավոտ շտաբից Բուռնազյանին հայտնում էին նախընթաց օրը նրա էսկադրիլիայի ունեցած մարտական գործողությունների արդյունքները։

«Երեկվա ընթացքում աշխատում էիք գերազանց։ Ցամաքային զորքերի հրամա-

նատարությունը գոհ է ձեր գործողություն-
ներից։ Այդպես էլ հարկավոր է աշխատել,
ապագա գվարդականներ»։ Նման գնահա-
տական նրանք ստանում էին ամեն օր։ Իսկ
օդաչուները պատասխանում էին. «Այսօր
կրկնակի գոհ կլինենք»։

Իր մարտական վարպետությունը կատա-
րելագործելու մշտական և անդուսպ ձգտումը,
խիզախումն ու նվիրումը թերևս
հերոս օդաչուի ամենանշանավոր գծերն էին։
Յուրաքանչյուր մարտական թռիչքի խոր
ուսումնասիրությունը, գործադրած մարտա-
կան տակտիկայի բոլոր էտապների ու ձևե-
րի մանրամասն վերլուծումը նա օգտագոր-
ծում էր ոչ միայն իր ստորադրյալներին
վարժեցնելու, նրանց որակը բարձրացնելու
համար, այլև իր սեփական փորձն ու գիտե-
լիքները հարստացնելու համար։ Նոր թռիչ-
քի պատրաստվելով՝ նա ամենայն լրջու-
թյամբ հաշվի էր առնում ոչ միայն իր էսկա-
դրիլիայի նախընթաց մարտերի փորձը, այլև
ուրիշ կործանիչ օդաչուների փորձը, բայց
յուրաքանչյուր մարտում աշխատում էր

չընդօրինակել նախնրթաց ձևերը և կամ ուրիշ օդաչուների, այլ ստեղծագործ կերպով էր կիրառում այդ փորձը։ Հենց այդ պատճառով Սերգեյի և նրա էսկադրիլիայի յուրաքանչյուր մարտական թռիչք ոչ միայն ուսուցում էր, ոչ միայն հակառակորդին ոչնչացնելու մարտ, այլև օդային տակտիկայի նոր եղանակների պրակտիկ կիրառում։

Բուռնազյանը ինքնուրույն կերպով մշակում և հաջողությամբ կիրառում էր օդային մարտի նոր եղանակներ, որ միշտ էլ նրան ու նրա էսկադրիլիային հաղթանակ էր բերում թշնամու դեմ։ Նույնիսկ թվաշատ հակառակորդի հանդիպելիս էլ նա միշտ ելք էր գտնում ամենաբարդ և ասես թե անելանելի իրադրությունից։ Այդ ժամանակ նա զգալի պարտություններ էր մատնում հակառակորդի գերազանց ուժերին, հաճախ ինքը ոչ մի կորուստ չկրելով։ Բուռնազյանի օդային մարտի տակտիկայում ամենագլխավորը հարձակ և անակնկալ գրոհն էր։ Նա օդային մարտում պաշտպանություն չէր ընդունում և երբեք էլ չէր կիրառում։

Հակառակորդի ինքնաթիռների բոլոր հիմնական տեսակների համար, նրանց զանազան կոմբինացիաներով հանդերձ, Բուռնազյանն ուներ օդային մարտի մանրակերկիտ մշակված եղանակներ։

Մի անգամ, հակառակորդի ռմբակոծիչների մի խմբի վրա ետևից գրոհելիս, Բուռնազյանը նկատեց, որ գերմանական ճնացած ինքնաթիռների հրաձիգները հնարավորություն ունեին նրան գնդակոծելու, ընդսմին նրանք ծակել էին Բուռնազյանի ինքնաթիռի ռադիատորը։ Այդ դեպքը ստիպեց, որ նա մարտի մի նոր եղանակ մշակի և կիրառի։ Արև եղանակին նա թռչում էր դեպի արևը և, աննկատելի մնալով, անսպասելի խրվում թշնամու ռմբակոծիչների մարտակարգերի մեջ և, խախտելով դրանք, մեկ-մեկ էր գրոհում վրաները։ Արև չեղած եղանակին Բուռնազյանը, որպես կանոն, թշնամու ռմբակոծիչների խմբի վրա գրոհում էր ցածրից, նույնպես խրվելով ու խախտելով նրանց մարտակարգերը։ Այդ տակտիկան կիրառելով Բուռնազյանը ցած է

գցել գերմանական 11 ռմբակոծիչ։ Նա մշակեց նաև թշնամու գրոհիչների ու կործանիչների դեմ մարտ մղելու իր եղանակները և դրանք գործադրում էր ամենաբազմազան ու բարդ պայմաններում և իրադրության մեջ։

Իր վարպետության շնորհիվ Բուռնազյանը սովետական ասսի փառապանծ անուն էր վաստակել, նրանով հպարտանում էին իր զորամասի բոլոր օդաչուներն ու հրամանատարությունը։

Ուկրաինայում մղված մարտերի երեք ամսվա ընթացքում Բուռնազյանը անձամբ ցած է գցել հակառակորդի 18 ինքնաթիռ և մինչև 1943 թ. մարտի 10-ը նրա անձնական հաշվում կար 250 մարտական թռիչք և հակառակորդի 28 ցած գցված ինքնաթիռ։

Բուռնազյանի ամբողջ էսկադրիլիան պարգևատրված էր շքանշաններով, իսկ հռչակավոր օդաչուի կուրծքը զարդարում էին երեք մարտական շքանշան։ «Շքանշանակիր էսկադրիլիա», այսպես էին անվանում Բուռնազյանի էսկադրիլիան ամբողջ ռազմա-

ճակատում, և երբ նա թռչում էր պաշտպանելու ցամաքային զորքերին, հետևակային մարտիկներն ու հրամանատարները գիտեին, որ թշնամու ոչ մի օդային ավազակ իրենց չի խանգարի մարտական խնդիրը կատարելու։ «Մեզ օդից Բուռնազյանն է պաշտպանում», հպարտությամբ ասում էին նրանք, հիանալով կարմիր աստղակիր շարժուն փոքրիկ բազեով, որը սրընթաց անցնում էր նրանց գլխավերևով։

№ 43 «Ցակ» կործանիչը հերոս օդաչուի ամուր ու հմուտ ձեռքերում փառավոր անցներով իր ծառայությունը, իր վերջին ռեյսն էր կատարում։ Հրամանատարության հրամանով Բուռնազյանը թիկունքի օդանավակայաններից մեկը եկավ 28 բաց կապույտ գույնի աստղերով զարդարված իր փոքրիկ բազեով։ Շուտով նա պետք է ստանար ավելի կատարելագործված մի նոր ինքնաթիռ։ Բուռնազյանը երազում էր է՛լ ավելի լավ պատերազմել նոր ինքնաթիռով, է՛լ ավելի ամուր խփել թշնամուն և հայրենիքի համար մղվող կատաղի մարտերում նոր փառք

նվաճել սովետական ավիացիայի համար։

Այդ մտքերով նա վերջին անգամ գործի դրեց իր «բազեիկի» դեկը։

Երբ նա դուրս էր գալիս կաբինից, նրան ընդառաջ վազեց ավիազորամասի շտուրման մայոր Պինդյուրը. Բուռնազյանը շուռ գալով մեծ ուրախությամբ տեսավ իր առջև իր սիրելի ուսուցչին՝ Խերսոնի ավիադպրոցի նախկին հրահանգիչ օդաչուին։ Նրանք ամուր գրկախառնվեցին և շնորհավորեցին իրար։ Բուռնազյանը ջերմ շնորհակալություն հայտնեց մայոր Պինդյուրին իրեն դաստիարակած լավ դպրոցի համար։ Մայոր Պինդյուրը հայտնեց իր հիացմունքը իր աշակերտի հերոսությամբ։

Շուտով դրանից հետո Բուռնազյանը կնաց նոր ինքնաթիռ ստանալու։ Բայց նշանակված տեղը չհասած՝ թշնամու ռումբի բեկորով նա սպանվեց։ Զիրականացան Բուռնազյանի երազները, նրան չվիճակվեց մարտական նոր թռիչքներ կատարել և բաղմապատկել իր մարտական փառքը։

Ընկերները հերոսի մարմինը փոխա-

դրեցին և թաղելով նրան Բորիսոգլեբսկ քաղաքում, երդվեցին թշնամիներից նրա վրեժն առնել նույնպես խիստ, ինչպես նա վրեժ էր առնում իր աշակերտ և բարեկամ Լադիգինի արյան համար, ինչպես անխնա նա վրեժ էր առնում թշնամիներից սովետական ժողովուրդների արցունքների և արյան համար։

Իր վերջին նամակում Սերգեյը մորը գրում էր, որ հաղթելուց հետո կգա նրա մոտ՝ Երևան հանգստանալու։ Բայց Սերգեյին չվիճակվեց ողջալ թշնամու դեմ տարած հաղթանակի ուրախությունը, որին հասնելու համար նա տվեց իր ամբողջ կյանքը։ Նրան չվիճակվեց նաև սիրած Երևան քաղաքի օդը շնչելու հաճույքը։ Հերոսի մայրը չիմացավ իր քաջարի որդու մեծ փառքը նա մեռավ որդու մահից քիչ առաջ, չիմանալով, որ իր որդին պատվով կատարելով իր պարտքը հայրենիքի հանդեպ՝ հռչակել է իր անունը հայրենիքի համար մղած դաժան մարտերում։

Այն օրերին, երբ ամբողջ հայրենիքը

աղատագրված է գերմանական աղտեղությունից, երբ Կարմիր Բանակը թշնամուն ջախջախում է նրա սեփական որջում, երբ մոտ է վերջնական հաղթանակը թշնամու, հիտլերյան ավազակների դեմ, Երևան է բերված հռչակավոր հերոս օդաչու ավագ լեյտենանտ Սերգեյ Ավդեևիչ Բուռնազյանի ինքնաթիռը։

Ժողովուրդը սերունդների համար հավիտենապես կպահի հերոս օդաչուի ինքնաթիռը որպես Բուռնազյանի մարտական փառքի կենդանի կրիչ։ Երկիրը քնքուշ գուրգուրանքով կշրջապատի հերոսի մեկ ու միակ որդուն՝ փոքրիկ Ավդեյ Սերգեևիչին և կդաստիարակի նրան, ինչպես և սովետական բոլոր մանուկներին, որպեսզի նա ևս ջերմորեն սիրի իր հայրենիքը, ինչպես իր փառապանծ հայրը, որպեսզի նա լինի այնպես խելոք ու քաջ, որպես Սերգեյ Ավդեևիչն էր։

Ժողովուրդն ու սերունդները, սեռնելով բաց կապույտ գույնի 28 աստղիկներով զարդարված № 43 «բազեիկը», հավիտենապես

կփառաբանեն իրենց հերոս որդուն ու նախահորը, որ իր հռուն երիտասարդ կյանքը նվիրաբերեց հայրենիքի պատվի և ազատության համար, ժողովրդի ու սերունդների երջանկության համար։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043281

(304)
ԳԻՆՐ. 3 Ռ.
9 (
A I/6974